ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Լ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Ի պատասխան Ձեր 23.04.2021թ. գրության՝ քաղաքացի Անահիտ Թությանջյանի նամակի վերաբերյալ, տեղեկացվում է, որ ներկայումս Երևան քաղաքում առկա քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների ամբողջական վերաբնակեցման համար անհրաժեշտ համապատասխան նպատակային ֆոնդ Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ առկա չէ, ինչի պարագայում հնարավոր չէ իրականացնել վերոնշյալ շենքերի բնակիչների ամբողջական վերաբնակեցումը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևան քաղաքում առկա քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային բազմաբնակարան և հանրակացարանային շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու աշխատանքներն իրականացնելու նպատակով Երևանի քաղաքապետի 14.11.2018թ. հ.3411-Ա որոշման հիման վրա ստեղծվել է հանձնաժողով և վերջինիս կողմից աշխատանքներ են տարվում համապատասխան ֆոնդի ձեռքբերման և վերաբնակեցման գործընթացը հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացնելու ուղղությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ